

# Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Լ ՈՒՐ ԵՐ

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՄԻԿՈՑԱՆԻ ՌԱՅՈՆՈՒՄ.— Երևանի Միկոսյանի ուսումնական կենտրոնում և Զինթոնի գլխավոր ուղեգծի սալարկման աշխատանքները, շարունակվում է Արաբկիրի Կոմիտասի անվան փողոցի սալարկումը: Այս տարի պետք է սալարկվի 12 հազար քառակուսի մետր տարածությամբ փողոց: Կոմիտասի փողոցով մինչև նրա հատվելը Քանաքեռի խճուղու հետ, անց է կացվում տրամվայի դիժ, կսկսվեն այդ խճուղին Արաբկիրի կոտնտեսային շուկայի հետ կապող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները:

Նախատեսված է ուսումնական անցկացնել ջրմուղային և էլեկտրական ցանցերի հետագա ընդարձակում: Նշանակալից միջոցներ են առանձնացված բնակելի շենքերի վերանորոգման և կուլտուր-կենցաղային ձեռնարկությունների շինարարության համար: Կառուցվելու են

նոր բաղնիք և բուժարան: Լալուրեն ծավալվել են նոր եռահարկ և քառահարկ բնակելի շենքերի շինարարության աշխատանքները:

ՇՐՋԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ.— Գործարար Սովետական Հայաստանի գեղեցիկ և բարեկարգ բաղնիքից մեկն է: Այստեղ կառուցված են նոր բազմահարկ բնակելի և հասարակական շենքեր, անց են կացված լայն ասֆալտապատ փողոցներ: Այս տարի բազաթի բնակիչները կունենան կինոթատրոնի նոր շենք, որի կառուցման համար բաց է թողնված մեկ միլիոն ուրուրաց ավելի: Տրիկոտաժի (հյուսվածքեղենի) ֆաբրիկայի բանվոր-ծառայողների համար կառուցվելու է նոր բնակելի շենք: Շինարարական հրապարակներում արդեն սկսվել են նախապատրաստական աշխատանքները: Նոր շենքերը շահագործման կհանձնվեն 1952 թ. աշնանը:

## ԱՐՎԵՍ ԵՎ ԿՈՒՆՏՐԱԿՏ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՎԵՍԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ.— Երևանի գեղարվեստական դաստիարակության ուսուցիչական տունը ուսուցիչական քաղաքների և գյուղերի դպրոցականների համար անց է կացնում դասախոսությունների մի ամբողջ շարք արվեստի հարցերի մասին: Արդեն կարգացվել են դասախոսությունները՝ «Կոմիտասի ստեղծագործական ճանապարհը», «Հայ ժողովրդի խմբերգային կուլտուրան», «Սովետական թատրոնի դերը աճող սերնդի դաստիարակության գործում» թեմաներով: Դասախոսությունները կարգացել են ուսուցիչական ժողովրդական դերասան Վ. Վաղարշյանը, արվեստի վաստակավոր գործիչներ Ա. Տեր-Ղևոնդյանը, Ս. Գասպարյանը: Փետրվար ամսում դպրոցականների և ուսուցիչների համար նախատեսված է անցկացնել դասախոսություն—համերգների ցիկլով Չայկովսկու, Գլինկայի, Սպենդիարովի, ինչպես նաև սովետական ուսուցիչական կոմպոզիտորների ստեղծագործություններին:

հուշարձաններ, այնպես էլ ժողովրդական ճարտարապետական ստեղծագործություններ: Գիրքը ընդգրկում է հայ ճարտարապետության պատմությունը ընդհուպ մինչև սովետական շրջանը:

ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ.— Հայաստանի նկարիչներն ու քանդակագործներն աշխատում են իրենց նոր ստեղծագործությունների վրա: Մի շարք նկարիչներ աշխատում են Հայաստանի հուշատեսիլային շրջանի արդյունաբերությունն ու շինարարությունը պատկերող ստեղծագործությունների վրա: Ա. Բեքարյանն աշխատում է «Գյումրու շրջանի շինարարները» թեմայով խոշոր կտավի վրա: Նույն թեմայով նկարների մի ամբողջ շարք է պատրաստում Հ. Ռոսիկյանը: Ա. Մարգարյանի, Գ. Չուբարյանի, Ե. Վարդանյանի քանդակագործական խումբը կերտում է «Մարի գյուղի հերոսուհիները» թեմայով քանդակը: Նկարչական շրջիկ արհեստանոցը Գ. Գյուրջյանի ղեկավարությամբ արշավախմբեր է կազմակերպում դեպի Հայաստանի գանազան շրջանները:

ՆՈՐ ԳՐՔԵՐ ՀԱՅ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.— Վերջերս լույս է տեսել Վ. Հարությունյանի և Ս. Սաֆարյանի կողմից կազմված մի դիրք՝ հայ ճարտարապետության հուշարձանների մասին: Այդ գիրքը մի նոր թանկարժեք ներդրում է ՍՍՈՒՄ ժողովուրդների կուլտուրական ժառանգության մասին եղած գրականության մեջ: Հաշվի առնելով գրքի արժանիքն ու ընդհանրապես, նրա կազմողները իրենց առաջ նպատակ չեն դրել սալ Հայաստանի ճարտարապետության պատմությունը, սակայն գրքի համառոտ տեքստային մասում նրանք գիտակցորեն, բայց և մատչելի ձևով շարադրել են հայ ճարտարապետության զարգացման հիմնական շրջանները: Այնուամենայն էլ ինչպես ուշ շրջանի հուշակապ ճարտարապետության մի քանի

ՈՒՇԱԳՐԱՎ ԺՈՂՈՎԱՍՏՈՒ.— Հայկական ՍՍՈՒ Պետական հեռակա մանկավարժական ինստիտուտը լույս է ընծայել «Հայ ժողովրդի բանահյուսություն» խորագրով մի ժողովածու, որ նախատեսված է իրեն ձեռնարկ ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի ուսանողության համար: Մեզանում սա առաջին փորձն է և որպես այդպիսին՝ ուշագրավ: Ժողովածուն ընդգրկում է հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության բոլոր ժանրերը: Նյութերը դասավորված են ըստ ժանրերի և թեմաների, որոշ չափով էլ, որքան այդ թույլ են տալիս բանահյուսության պատմության տվյալները, պահպանված է նյութերի ժամանակագրական կարգը:

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ, ՀԻՇԱՏԱԿԻ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ.— Փետրվարի 26-ին Հայաստանի Սովետական Գրողների Միության դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ նվիրված Ֆրանսիական մեծ գրող Վ. Հյուգոյի ծննդյան 150-ամյակին։ Երեկոն բացեց հորեյանն անցկացնող սեպտեմբերյան հանձնաժողովի նախագահ Ավ. Իսահակյանը։ Հյուգոյի կյանքի և գրական գործունեության մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Սողոմոնյանը։ Երեկոյին Հյուգոյի բանաստեղծություններից թարգմանություններ կարդացին բանաստեղծներ Հր. Հովհաննիսյանը, Հս. Պողոսյանը, Ս. Տարոնցին, Հ. Շիրազը և ուրիշները։ Վերջում մայրաքաղաքի արտիստական ուժերով տեղի ունեցավ համերգ։

Գ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԾՆՆԻՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ.— Սովետահայ ականավոր գրող Գ. Դեմիրճյանի ծննդյան 75-ամյակը հանդիսավոր կերպով նշելու համար Հայաստանի Սովետական Գրողների Միության դահլիճն էին հավաքվել գրողներ, արտիստներ, կերպարվեստագետներ, հասարակական կազմակերպությունների և մամուլի ներկայացուցիչներ։

Հանդիսավոր երեկոն բաց արեց Հայաստանի Սովետական Գրողների Միության պատասխանատու քարտուղար Գ. Բորյանը։ Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու է. Թոփչյանը հանդես եկավ բազմամաստակ գրողի կյանքն ու գործունեությունը, նրա անցած ստեղծագործական երկարամյա ուղին ընդհանուր գեղարվեստում։ Անվանի հորեյարին շնորհավորանքի շերտազին խոսքեր ասացին Ն. Զարյանը (Հայաստանի Սովետական Գրողների Միություն), Աս. Ասատրյանը (ՀՍՍՌ Գիտությունների Ազգայնագիտության ինստիտուտ), Վ. Հարությունյանը (Ճարտարապետների Միություն), Ս. Տարոնցին (Հայաստանի Պետական հրատարակչություն) և ուրիշները։ Երեկոյին ընթերցվեց հորեյարին հղված բազմաթիվ շնորհավորական

ԵՎ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԵՐԵՎԱՆԵՐԻ

հեռագրերի մի մասը։ Վերջում հանդես եկավ հորեյարը, որին ներկա գտնվողները ընդունեցին հոտնկայա, բուռն ծափահարություններով։

Ն. Յ. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՎԱՆ.— Երևանի երաժշտաբան հասարակությունը նշեց հայկական երաժշտական կուլտուրայի ամենահին գործիչներից մեկի, Հայկական ՍՍՌ ժողովրդական կոմպոզիտոր Ն. Յ. Տիգրանյանի մահվան տարեդարձը։ Հայաստանի կոմպոզիտորների միության դահլիճում տեղի ունեցավ Տիգրանյանի հիշատակին նվիրված երեկո։ Նրա կյանքի ու գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Ա. Տեր-Ղևոնդյանը։

Տիգրանյանի մասին հիշողություններով հանդես եկան արվեստի վաստակավոր գործիչ Ա. Մանուկյանը և կոմպոզիտոր Գ. Ղազարյանը։ Երեկոն փակվեց Տիգրանյանի ստեղծագործություններից տրված համերգով։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԼԵՍՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՏԱՆԸ.— Հայաստանի արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ հանդիպման երեկո սեպտեմբերյան ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Արևին Քոչարյանի հետ։ Գեղարվեստական խոսքի վարպետի հետ հանդիպելու համար հավաքվել էին թատրոնների աշխատակիցները, թատերական ինստիտուտի և մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները։ Ողջույնի խոսքով հանդես եկան սեպտեմբերյան ժողովրդական արտիստ Վ. Վաղարշյանը և արվեստի աշխատողների տան վարիչ Ա. Բարսեղյանը։ Պատասխան խոսք ասեց հավաքվածների կողմից շերտաբան ընդունված Ս. Քոչարյանը։ Այնուհետև կայացավ երեկոյի գեղարվեստական մասը, որտեղ Ս. Քոչարյանը մեծ վարպետությամբ կարգացր. Պոլեոյի «Ոսկի» վեպի իր կազմած կոմպոզիցիան։ Երեկոն անցավ շերտ մթնոլորտում։

ՈՒՄՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՈՒՄՄՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹՅՈՒՆ.— Նոր Բայազետի շրջանի ավելի քան 250 ուսուցիչներ հավաքվել էին մեթոդական խորհրդակցության, որտեղ քննարկվում էին պարապմունքների կազմակերպման ու անցկացման, անցած նյութի կրկնության և 2-րդ տարեցիության (կրկրորդ տարին նույն դասարանում մնալու դեպքերը) վերացման հարցերը։ Մոսկվայի առաջավոր դպրոցների փորձի մասին զեկուցումով հանդես եկավ ժողովրդական կրթության բաժնի վարիչ Ա. Դովլաթյանը և Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության դպրոցների գիտահետազոտական ինստիտուտի գիտական աշխատող Մ. Աբեղատյանը։ Խորհրդակցությունը մշակեց մի շարք մի-

ջոցառումներ ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բարելավման համար։

ՈՒՄՄՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության ուսուցիչների կատարելագործման ինստիտուտը կանոնավոր կերպով կազմակերպում է դասատուների որակավորման դասընթացներ, դպրոցներին ցույց է տալիս մեթոդական օգնություն։ Անցած տարվա ընթացքում միամսյա դասընթացներում վերապատրաստվել են 3000-ից ավելի մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության և այլ առարկաների ուսուցիչներ։ Առանձին ուշադրություն է դարձվել լեզվի և գրականության ուսուցիչների վերապատրաստման գործին։

### ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

**ԿՈՒՆՏՆԵՍԱՅԻՆ ԱԿՈՒՄՐԸ.**— Հոկտեմբերյանի շրջանի Հոկտեմբեր գյուղի կոլտնտեսային ակումբի աշխատակիցները մեծ աշխատանք են տանում բնակչության մեջ: Անցյալ տարվա և այս տարվա հունվարի ընթացքում կոլտնտեսականների համար այստեղ կարգացվել է մոտ 50 դասախոսություն՝ բազարական, գիտական և գյուղատնտեսական թեմաներով: Ակումբում գործում են երգի-պարի, դրամատիկական, սրահային և այլ խմբակներ: Կանոնավոր կերպով ցուցադրվում են կինոնկարներ: Հունվարի ընթացքում ցուցադրվել է 8 կինոնկար, 1 ներկայացում և լավել է երկու համերգ:

Ակումբում տեղավորված են 2 գրադարան, որոնք ունեն 3500-ից ավելի բազարական, գեղարվեստական և գյուղատնտեսական գրքեր:

**ԿՈՒՆԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԳԻՍՏՐՏԱՑԻԱՆԵՐ ԵՆ ԳՐՈՒՄ.**— Ախտրվայի գյուղի Միկոյանի անվան խոշոր կոլեկտիվ տնտեսությունն արդեն 2-րդ տարին է, ինչ ղեկավարում է գյուղատնտես Օ. Նիգարյանը: Նա անխոշ լեզուով աշխատում է իր գիտելիքների բարձրացման ուղղությամբ: Երկար տարիների փորձից հետո այժմ նա աշխատում է «նոտերի խառնուրդի ամենալավ բազադրիչի հայտ-

նաբերումը ճակնդեղային ցանքաշրջանառության մեջ» թեմայով թեկնածուական դիսերտացիայի վրա: Թեկնածուական դիսերտացիայի վրա է աշխատում նաև Ախտրվայի շրջանի Արևիկ գյուղի Կիրովի անվան կոլեկտիվ տնտեսության նախագահ Ա. Գալանյանը: Նա աշխատում է «Բազմամյա խոտերի բերքատվության բարձրացման միջոցառումները Շիրակի պայմաններում» թեմայի վրա: Փորձադաշտերում նա հասել է նշանակալից հաջողությունների:

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՍՆԽՈՍԱՐԱՆ.**— Նոր Բայազետի շրջանի Սարոփան գյուղում գործում է տեղական դասախոսարան, որի անդամներն են ուսուցիչներ, գյուղատնտեսներ, բժիշկներ, գյուղատնտեսության առաջավորներ:

Հստ Սարոփանի դասախոսարանում հաստատված կարգի՝ դասախոսները հատուկ տեսերում գրանցում են լսողների հարցերն ու առաջարկությունները: Հաշվի առնելով դրանք, դասախոսարանի ղեկավարները սկսել են անցկացնել գիտություն տարբեր բնագավառների վերաբերյալ դասախոսություններ: Կարգացվել են հանրամատչելի դասախոսություններ բնական գիտությունների վերաբերյալ:

### ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության փետրվարի 14-ի հրամանագրով մի շարք բազմազավակ մայրեր պարգևատրվել են «Մայրական փառք» շքանշանով և «Մայրության մեդալ»-ով:

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ.**— Մի բանի ամիս առաջ անցկացվեց բուհերի (Բարձրագույն ուսումնական հաստատություն) ուսանողների գիտական աշխատությունների համամիութենական

ստուգատես: Երևանի բուհերը ներկայացրել էին 66 աշխատանք, որոնք ընդգրկում էին պատմության, փիլիսոփայության, բնագիտության և գիտության այլ ճյուղերի բազմաթիվ հարցեր: Ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքներին ակտիվորեն մասնակցած և ամենից ավելի արժեքավոր աշխատանքներ ներկայացրած ուսանողները արժանացան ՍՍՌ Բարձրագույն կրթության մինիստրության զուլառանագրերին:

